ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ 17 ՅՈՒՆՎԱՐ 1873 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԹԻՒ 121

ՄԵՂՈՒ

ԿԱՄ ՀՈՍՏՈՄԱԿԱՆ

ՀԱՒԱՏՔ ԵՒ ՀԱՒԱՏԱՄՔ ՕՐԵՐՈՒ

Գին տարեկան 100 Թերթ կանխիկ դրչ. 100. Վեցամսեայ 50 Թերթ դրչ. 50։ Գաւառաց համար 100 Թերթ 1 լիրա. 50 Թերթ 1/2 լիրա։ Մէկ Թերթը 30 փարայ։ Հրատարակելու համար եկած յանուցմանց սակարկութիւն կըլլայ։

— Բաժանորդագրութեան տեղն է Կ. Պոլիս Ճամլը խան միջնայարկ Թիւ 8։

Գուրեէն եկած ամենայն յօդուածք կը կրճատուին ըստ հարկին։ Նամակներն ու յօդուածները պէտք է ուղղել առ խմբագիրը։

ՄԵՂՈՒ ԱՌ Պ. Ե. Է.

Օրթաղիւղ

Ընկալայ ձեր նամակը։

Մեղուի վերջին Թուոյն մէջ հրատարակեալ պատկերին մէջ՝ նախատինք տեսնել երեսակայելուդ համար բաժանորդագրութենէդ դադրած ըլլալնիդ կիմացնէք։

Ձեր այդ նամակը ղարմացուց զիս պարոն։ Կըսէք Թէ նախատինք տեսեր է. բայց այդ պատկերին մէջ նախատինք չկայ, ձեր տեսածն ինչ է արդեօք։

Արդարև դիտէի որ կան աչքեր՝ որք կարճ կը տեսանեն, դիտէի որ կան աչքեր որ ծուռ կը տեսնեն, բայց կնանքին մէջ երբէք չէի լսեր որ կան եղեր աչքեր՝ որք չեզած բան մը կը տեսնեն։ Ա՛ս ալ տեսակ մը աչքի հիւանդութիւն է եղեր, և բնաւ չէի ուզեր որ այս հիւանդութենէն բանըլլի ձեզի պէս երիտասարդ մը։

Աչքի հիւանդութիւն ունիք պարոն. ինքըզինքնիդ բժշկի մը ցցուցէք. կաղաչեմ, անվոյթ չդանըլլիք այս մասին, որովհետև երբ այսպէս ուրիշներուն չտեսածը դուք միայն տեսնէք՝ ամէն մարդ կը կասկածի ձեր վրայ և ան ու աս կըսկսի ըսել Թէ՝ պարոն Էմմանուէլ Եսայեանի աչքին ուրուականներ երևնալ սկսեր են։

Տօքթէօր Ֆիշէրին դիմեցէք, պարոն, իմ կողմէս յատկապէս բարև ըրէք իրեն և ըսէք Թէ՝ քովը դնռ ապակի կայնէ՝ ակնոց մ՚ալ ձեզի համար հնարէ, ձեր աչքերը բժշկէ և լրագրաց մէջ իր վրայ Թափված գովեստները կատարելագործէ։

Եւ ինչ էր պատկերին նպատակը. ամենապարզբան մը—Վատ մը՝ որ պատիւ հօր դէմ ոխոյ խնդիր կը յարուցանէ։ Եւ երբ մէկը սէրը անճնաւորել ուզէ՝ ինչ կերպարանքով ներկայացնելու է զայն մեծապատիւ ողբերգակ, ոչխարի՞ կերպարանքով Թէ դայլի, ձիո՞ւ կերպարանքով Թէ իշու։ ախ՜ոռ որ Աղաղոնի քնարը դողնալու համար քանի մը անգամներ ԹԷԹևուԹեամբ Ողիմպոսի դագաղը Թռաւ, դոնէ հո՞ն ալ չտեսար Աստղիկը և մուսաները։ Տարօրինակ աչքեր ունիք պարոն, երևելի բաները չէք տեսներ և աներևելիները կը տեսնէք։

Պարոն ձեր աչքի հիւանդութեան պատճառաւ չէք կրցեր լաւ հասկնալ պատկերին իմաստը. կաղաչեմ անգամ մ՚ալ աչքէ անցուցէք զայն, և Թէ որ դարձեալ չկարենաք հասկնալ, ուրիշի մը հարցուցէք և հասկցէք,

Նամակ ղրկելնուդ պատճառը անչուշտ պատասխան առնել ուզելնիդ էր։

Ա՛ռէք ձեր պատասխանը։

Ջաղջր է ինձ կարծել որ խօսակցութեան աղատութեան հետ լսելու ազատութիւնն ալ կը յարգէք, ու մէյ մ՚ալ բան մը լաւ չհասկցած անոր ասոր Թուռնալի նամակները չէք դրեր։

Որով ինամ, ինչպէս որ մնացի մինչև հիմայ։

Ս.ՏԵՓԱՆ ՄԵՂՈՒԻ

ՆԻՍՍ ԱՌԱՋԻՆ

Սրբազան Պատրիարք հօր վրայ եղած ղրպարտութեան հեղինակները դանելու նպատակաւ՝ Մեղու պէտք եղած խուզարկութիւնները՝ ընելէն յետոյ, վերջապէս յայդնեցաւ դտնել երկու անձեր՝ որոնցմէ կը կասկածի հասարակաց կարծիքը։

Նկատելով որ լոկ կասկած մը չբաւեր զանոնք ղրպարտութեան իբրև բուն հեղինակ ճանչնալ և վճիռ արձակել, հարկ եղաւ ատեան մը բանալ և զանոնք հարձախուզել։

Ատեանը այս առտու բացվեցաւ ընդ Նախագահութեամբ Մեղուի։

Մեղու իր բոլոր ծանրութեամբը բազմեցաւ դահուն վրայ, խիստ կերպարանք մը առաւ, իր դէմքէն վանեց բոլոր ժպիտները, և հրամայեց որ իր առջև բերվին այդ կասկածելի անձինքը։

Հրամանը իսկոյն կատարվեցաւ։

ՄԵՂՈՒ։ Բ..... էֆէնտի ըսվածը հրամաքնիդ եք։

Բ..... Ա՛յո՛, քաղաքական ժողովոյ ալ անդամ եմ։

ՄԵՂՈՒ. Անդամ ըլլալնուդ վկայ մ՚ունի՞ք։

Բ..... Ա՛յո, Պրուսայի խնդիրը. բայց հրամանքնիդ ո՞վ եք.

ՄԵՂՈՒ. Գիտցիր մեծապատիւ էֆէնտի, որ հո՛ պատասխանելու համար եկած եք և ոչ Թէ հարցնելու համար, սա ձեռքերդ ծոցեդ հանէ՝ ոտքերդ մի՛ խաղցներ և շիտակ կայնէ, ասոր ատ տեղը Ղալաթիոյ վարժարանը չէ։

Բ..... (քմծիծաղով մը) հրամանացդ կը հնազանդիմ։

ՄԵՂՈՒ. Ընկերներուդ մէկուն բերնեն լսեցի որ, գանձանակի մէջ նամակ մը ձգվելիքը առկէ ամիս մը առաջ դուշակեր և մեկ քանի անձանց ալ ըսեր ես. ինչպէս կրցեր ատ գուշակութիւնն ընել։

Բ..... Սկզբին դործերուս մէջ սատացած փորձառութեամբս չատուց դիտէի որ՝ մէկ մարդու մը մէկ կնիկ պէտք է. ուստի Պատրիարքն ալ իբրև մարդ նկատելով ատ դուշակութիւնն ըրի։

ՊՈՂՈՍԻ ՄԸ ՎՆՈՒԹ

(Ի . . . . . ֆրանսերէն յետադրութիւնը տե՛ս յետոյ)

ՄԱՆԳՈՒԻՆ . Յաջորդ շաբաթ ։

ՏԻՐ Յ . . . . . Սպասեցէք ։

ՄԱՆԳՈՒԻՆ . Ես ոչինչ ալ ։ Իմ ծրագիրս է միայն ։ Ես ուզեցի ձեզ տեսնել ։ Ես ուզեցի ձեզ ասել ։ Ես ուզեցի ձեզ խնդրել ։

ՏԻՐ Յ . . . . . Ա՛հ ։ Ինչ որ ալ ըլլայ ։ Ես ձեզ կը սիրեմ ։

ՄԱՆԳՈՒԻՆ . Ես ալ ։ Ես ալ ։ Ես ալ ։

ՏԻՐ Յ . . . . . Ա՛հ ։ Ինչ որ ալ ըլլայ ։ Ես ձեզ կը սիրեմ ։

ՄԱՆԳՈՒԻՆ . Ես ալ ։ Ես ալ ։ Ես ալ ։

ՏԻՐ Յ . . . . . Սպասեցէք ։ Ես ձեզ կը սիրեմ ։

ՄԱՆԳՈՒԻՆ . Ես ալ ։ Ես ալ ։ Ես ալ ։

ՏԻՐ Յ . . . . .

իմ զիջումներս մեզ հաս-
րիս 112 այսօր գրաւած է · Հիմա մի-
sont chers et aimés de leurs parents · զա-
վակներ իրենց հոգին ալ սիրած են· ասոր բացատ-
րութիւնը պիտի տամ ձեզի · Ո՛չ մի հայրենասէր
կրնայ ուրանալ իր ազգին ներկայ դրութիւնը ·
Նահանջ մը, «Նասրէտտին Շահ»-ի ներկայացու-
մին ընթացքին, ինչպէս որ ըսի, Dieu exploque le
monde et le monde le prouve · Նոր Աստուածներ
ստեղծելու պահանջ չկայ · Ամբողջ աշխարհը
կրնայ բացատրուիլ Աստուածով · Ա · Գրքոյկ մը
գրած եմ «Ազգային Ժողովրդավարութիւն» անու-
նով, որուն մէջ ցոյց տուած եմ թէ ինչպէս ազգա-
յին զգացումը կրնայ ներդաշնակիլ ընկերային
արդարութեան հետ · Ա · Գրքոյկ մը գրած եմ «Ազ-
գային Ժողովրդավարութիւն» անունով, որուն մէջ
ցոյց տուած եմ թէ ինչպէս ազգային զգացումը կրնայ
ներդաշնակիլ ընկերային արդարութեան հետ · Ա ·
Գրքոյկ մը գրած եմ «Ազգային Ժողովրդավարու-
թիւն» անունով, որուն մէջ ցոյց տուած եմ թէ ինչ-
պէս ազգային զգացումը կրնայ ներդաշնակիլ ըն-
կերային արդարութեան հետ · Ա · Գրքոյկ մը գրած
եմ «Ազգային Ժողովրդավարութիւն» անունով, որուն
մէջ ցոյց տուած եմ թէ ինչպէս ազգային զգացումը
կրնայ ներդաշնակիլ ընկերային արդարութեան հետ ·
Ա ·

Յապաղեցանք ծանուցանել ազդարարոյ որ Զմիւռնեացի հանրաւաստի բժիշկ Պ. Կարապետ Մարկոսեան, որ քանի մը տարի առաջ ուսմունքը Բարիզ աւարտելով Զմիւռնիա վերադարձած էր և ուր իր մարդասիրական և ազգասիրական եռանդեամբն հանրածանօթ եղած Զմիւռնիացի հասարակութեան, մօտերս Մայրաքաղաքս հաստատ և կը բնակի ի Բերա Սամալը մէճիա Ն. 22։

Մ. Կարապետ Մարկոսեան Նուպար բայլի քեռորդին է և Մարկոս Եան երևելի դերդաստանի զաւակ. և ինչպէս որ կը վկայեն այդ դերդաստանն երևելի ընող հանճարն ու ճիրքերն ժառանգած և բժիշկական հմտութեամբը կատարելագործած է։

Ուրախութեամբ կիմանանք որ Պ. Մարկոսեան բարեհաճեր է չաքաթը երկու անգամ, այսինքն ե. րեքշաբթի և ուրբաթ օրերն ճրիապէս խնամել իրեն դիմող հիւանդ ազգայինքն ի Սամաթիա խահվեճի հանի Գալըսահի տունը։

Ուստի կը հուսամք մեր չնորհակալութիւնները ազգայնոց և մանաւանդ Սամաթիացոց կողմէ կանխաւ մատուցանել երտասարդ բժշկին։

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏՔ

Բարեկամ, կարդայիր ազգային պարտուց բարձման յանձնաժողովին հրատարակած տեղեկագիրը, հանդանակութեան մասնակցող նուիրատուաց ո. մանց անունները նչանակված չեն հոն։

Կերևայ թէ, ճանճնաժողովը՝ տըպագրական ծախսը թեթևցնելու համար նուիրատուաց ամենուն ալ անունները՝ նուէրներուը հանդերձ նչանակելու հարկ չէ տեսեր։

Փունջ կըսէ թէ՝ 2000 ոսկիի դումար մը ժողոված է հոն դրկելու. Մեզուն ալ իմացաւ թէ 700 ոսկիի դումար մ'ալ կը պակսի հոն, որով ըստ Փունջի հաշուոյն 2700 ոսկիի դումար մը ի միջոյ բարձակալ է։

Կը յուսանք որ Պատրիարքարանն այս մասին պէտք եղած տեղեկութիւնները չըլանար ազգին։

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

Լրագրոյս տպարանը աժան դնով և մաքուր տպագրութեամբ կը տպվի հարսնիքի և յուշարկաւորութեան տոմսակներ։

Ան կարգվելու և մեռնելու յարմար առիթ մը։

Կը տպվի նաև տետրակներ և գիրքեր առանց տպագրական սխալի։

Ան՛ տակ վաստկելու ժամանակը։

Կը տպվի նաև անուանց ցուցակներ աժան դնով։

Հանդանակութեան մասնակցող և անուններին տեղեկագրին մէջ գրվելու մոռցված պարոններուն ուշադրութիւնը կը հրաւիրենք։

Հարկ կը համարինք նաև յիշել որ լրագրոյս տպարանը կը գտնվի Յունաբէն, Գաղղիերէն, Տաճկերէն և Պուլկարերէն տառեր. կը գտնվի նաև Մեծագոյ Յարութիւն աղա Զամպրճեանը որ՝ ինչպէս որ ծանօթ է, դրացարալենաց մէջ բարձր տեղ մը կը բռնէ։

ՎՐԻՊԱԿ

Մեղուի 119 թուոյն մէջ «Թատերական տեսութիւն» վերնագրով հրատարակեալ յօդուածին մէջ՝ Պ. Մաղաքեանի համար «վիճակին պահանջած կիսկատակ դոյնը կրցաւ տալ» ըսվելու տեղ՝ սխալմամբ «կիսկատար դոյնը» ըսվեր է։

Միւս մէկ քանի տպագրական սխալներն արդէն ընթերցողք ուղղած ըլլալնուն զանոնք հոս դնելն աւելորդ կը համարինք։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Անցի օրը՝ Թրամվէյի առջևէն վազողներուն մէկուն ոտքը սահելով մազ մնաց որ Թրամվէյի տակը պիտի մնար։

Ընկերութիւնը այս մասին ալ անփոյթ ըլլալու չէ, այս խնդիրներուն ալ մեզք է. և պատնկ կառքերուն առջևէն վազելով օր մը չէ նէ՝ օր մը կառքերուն տակը պիտի մնան։

— Ինչ է ասոր ճարը։

— Կառքերուն ետևէն վազելու են, որպէս զի իմանան նէ՝ Թրամվէյի տակը չերթան։

* * *

Մասիս՝ անցեալ շաբթու քաղաքականութեան հորիզոնին վրայ սև կէտեր տեսեր է եղեր։

Թող Մասիս փառք տայ Աստուծոյ որ այդ կէտերը սև են եղեր, որովհետև եթէ ճերմակ ըլլային չպիտի կրնար տեսնել զանոնք։

* * *

— Տղաս, ուր է ոտքի ամաններդ։

— Մայրիկ, ալամպրայի առջևէն անցած ատենս ցեխերուն մէջ կորսըվեցան, վնասեցինք, վնասեցինք, չկըրցինք գտնալ։

* * *

— Ուր կը վազես ասանկ։

— Տօրթօր Ֆիշերի։

— Ինչ՞ պիտի ընես հոն։

— Աչքերս պիտի ցցունեմ։

— Աչքերդ բան մը չունին։

— Ինչպես չունին, հանդանակութեան մասնակցեցայ և ցուցակին մէջ անունս չեմ կրնար տեսնել։

* * *

— Ինչ տարբերութիւն կայ կոյրի մը և եապեանի մէջ.

— Սա տարբերութիւնը կայ որ առաջինը չտեսներ ինչ որ ամեն մարդ կը տեսնէ, իսկ երկրորդը կը տեսնէ ինչ որ և ոչ մէկ մարդ մը կը տեսնէ։

Ով եղիչե, բերանդ համբուրեմ։

* * *

— Քաղաքական ժողովը ինչ ըրաւ մինչև հիմա։

— Անոր ատոր առատ առատ չնորհակալութեան քուէ տուաւ։

— Զըսե՞ս որ, իրեն համար չնորհակալութեան քուէ չմնաց։

* * *

— Ամանութիւն կըսեն նէ՝ ինչ է հայրիկ։

— Տրամաբանական ձեռնարկութիւն մ'է տղաս, որուն առաջինն նախադասութիւնը այն է, երկրորդը՝ կինը, աւելորդ է ըսել որ եղրակացութիւնները ալ զաւակներն են։

— Ըսածնիդ սխալ է հայրիկ, մէկ ձեռնարկութենէն քանի եղրակացութիւն կելնէ։

— Մէկ եղրակացութիւն կելնէ ամա, ... իմաստակները չկա՞ն միասանց հետ դլուխ կելնըվի՞ մի, երբեմն մէկ ձեռնարկութենէն երկու եղրակացութիւն կը հանեն։

* * *

ԼՈՒՍԱՆԿԱՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Մ. ԲԱԲԱԶԱՆ

Օֆճո-լար պաչ ֆի- 47

Մ. Բաբազանը՝ որ արդէն հասարակութեան դիւրութիւն մը տալու համար գործարան մը հաստատելով Օֆճուլար պաչը թիւ 47, բոլորին դիմողները գոհ ըրած էր, հիմա ալ չնորհիւ նոր գործիքներու և բազդրութեանց՝ առաջիններէն աւելի մաքուր, գեղեցիկ և փայլուն լուսանկարներ հանելով իրեն յաճախորդները ամեն կերպիւ գոհ ընելու պատրաստ ըլլալը կը ծանուցանէ։

———

ՏԷՐ ԽՄԲԱԳԻՐ ՏՆՕՐԷՆ
Ե. Գ. ԱԲՎԱՃԵԱՆ Ե. Ե. ՊԱՐՈՆԵԱՆ

Գ. ՊՕՂՔՍ
ԱՍՄԱ. ԱԼ.ՓԸ., ՃԱՄԼԸ ԽԱՆ.